

«ՀԱՅ ԱԶԳԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ (Նյութեր և ուսումնա-
սիրություններ)», № 18, Մոսկվա», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան,
1984, 215 էջ:

Դիտական հասարակայնությանը ներկայացված սույն երկասիրությունը արժանի է և՛ բարձր գնահատականի, և՛ երախտագիտության: Այն համահավաք ժողովածու է՝ կազմված բազմազան ու խորթին նյութի լայն խմբությունում և գիտական լրջմտությամբ: Ընդգրկելով բանահյուսական հաղվածքային նյութ, այն անխառնելի մի գունձարան է, ուր հավերժ ի պահ է տրված հայ ժողովրդի մտքի, ոգու և սրտի բազմաթիվ գեղարվեստի մի սքանչելի խճանկար: Ավելին. պետք է նկատի ունենալ, որ դրանք գալիս են հայ ժողովրդի այն հատվածից, որը Հայկազգիի դաժան խաղով դարձր առաջ բաժանվել է մայր հողից, ապավինել օտար լեռների ձերպերին և մին-մենակ մնացել ինքն իր հետ: Սա առանձին արժեք է տալիս այդ նյութերին, որոնք, անխուսափելի խաչաձևումներով հանդերձ, հին են ու տոճական: Ավելացնենք, որ դրանք այն հատվածին են, որը «մուսալեոցի» հպարտ անունն է կրում: Բեկ մուսալեոցին քաջ հայտնի է իր պահպանողականությունում ու գուրգուրանքով այն ամենի նկատմամբ, ինչը կապված է իր անվան հետ, բայց՝ այսօր շատ հանգամանքների բերումով ակամա մեկ առ մեկ հրաժեշտ է տալիս այդ նյութերին: Կազմողի՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Վերոնիկա Սվազյանի վիճակագրական հաշվումներով 20—25 տարիների ընթացքում «ժողովրդական» նյութի քանակը զգալի չափով նվազել է (գրեթե 68%-ով)» (էջ 12): Իսկ սփյուռքում, ուր մուսալեոցին իր սոճմիկ սովորությունները, ուրույն բնավորությունը, բանավոր ժառանգությունն ու բարբառը պահպանելու խիստ աննպաստ պայմաններում է, օրըստօրե ավելի ցիրուցան լինելով, ազգագրական ու բանահյուսական մեծ կորուստ է կրում: Ահա թե ինչու, փրկված ամեն մի բեկոր (իսկ այդպիսիք շատ են այս ժողովածուի մեջ) երախտագիտություն է թելագրում: Հարկ է ընդգծել նաև այն, որ Մուսալեոցին (Սվեդոն) բարբառը, իր ենթադրությունով, ամեն մի ոչ մուսալեոցու համար հընչյունային, քերականական և, մասնավոր, գիտական տառադարձության տեսակետից խիստ մեծ դժվարություն է ստեղծում: Ի պատիվ կազմողի, որն այնքան եռանդալիս նվիրումով է ձեռնարկել այս աշխատանքին և շուրջ 25 տարի շարունակ հատիկ առ հատիկ ի մի բերել գեղարվեստի այս ամբողջությունը, պիտի ասել, որ գրեթե լիովին հաղթահարել է դրանք: Սույն ժողովածուն գիտական ամբողջական առաջին փորձն է՝ նվիրված բանահյուսության անշափ ինքնատիպ ու հետաքրքիր այս նյութերին:

Ժողովածուն կազմված է հետևյալ հիմնական մասերից. ներածություն, վիպական բանահյուսություն, քերականական բանահյուսություն և բանաձևեր՝ իրենց ենթամասերով: Ունի նաև զծվարըմունքի բառերի բառարան, ծանոթագրություններ, աղյուսակներ, բանասացների համառոտ կենսագրականներ և ուսերեն ու անգլերեն ամփոփումներ: Աշխատությունը ընդգրկում է 55 հեքիաթ, ավանդություն, առակ, անեկդոտ, զրույց, 120 երգ, 630 առած-ասացվածք, 33 հանելուկ, 134 սուենք, օրհներգ, երգում, 300 դարձվածք:

Ներածության մեջ տեղեկացվում է նյութերի հավաքման, ժամանակագրական կարգի, ծագման վայրի ու ծավալման տարածքի, քանակական պատկերի, նաև ասացողների մասին, որոնց մի մասը այսօր արդեն կյանքին հրաժեշտ է տվել: Այստեղ խոսվում է նաև հիշյալ նյութերի կենցաղավարման ձևերի ու պայմանների, ժանրային հատկանիշների, խաչաձևումների, փոխակերպումների, մուսալեոցիների կենսական-աշխարհագրական պայմանների, սոցիալական տեղաշարժերի ու սերնդափոխության՝ դրանց վրա ունեցած անդադարձի և հարակից. այլ հանգամանքների շուրջ: Այս բոլորն էլ պատմական ու գիտական առումով միանգամայն անհրաժեշտ և շահեկան են, մասնավոր չենք մասնագիտական տեսանկյունից: Ուսումնասիրությունը խորսխված է նորագույն մեթոդաբանական սկզբունքների (հատկապես Ի. Լեինի մշակած քանակական վերլուծական հայկական կողային համակարգի) վրա: Առերթիք աղյուսակները (1. բանահյուսական նյութերի քանակը ըստ գրառման ժամանակահատվածների, 2. նյութերի և բանասացների սեռի փոխհարաբերությունը, 3. նյութի և բանասացների սեռատարբերային փոխհարաբերությունները) ավելի են ընդգծում այս հանգամանքը:

Վիպական բանահյուսության առավել ընդարձակ բաժնում ընդգրկված են հեքիաթներ, ա-

աակներ, անեկղոտներ, ավանդություններ, սնահավատական զրույցներ: Մեծ տեղ են գրավում հեքիաթները, որոնց ընդհանուր հեքիաթային հենքի և հեքիաթներում տևապես զորեղ ծանոթ կերպարների (Քազավոր, վեղիր, Քազավորի կին, տղա, աղջիկ, իմաստուն ծերունի, շար պառավ, կտրիճ կամ ճաղատ տղա, սիրուն ու խելացի աղջիկ, որսորդ, դև, օձ, սատանա և այլն) միջոցով ներկայացնում են առավելապես Մուսալեռան ժողովրդի կենսալիորձի, իմաստություն, մտածելակերպի, հուզական աշխարհի, հումորի, զեղարվեստական մտածողության, լեզվական բազմաբանության, բառ ու բանի, կենցաղային որոշ առանձնահատկությունների և ոգու ազնվության ողջ հարստությունը: Ավանդությունների հետ միասին դրանք երբեմն արտացոլում են մուսալեռացիների և նրանց աշխարհագրական միջավայրին առնչված պատմական իրադարձություններ, տեղանունների ծագման բացատրություններ, ժողովրդի հիշողության մեջ ապրող կերպարներ, դիպվածներ: Այս ուրույն նյութերի մեջ կան զանազան խառնձեղումների հետքեր, սյուժետային փոխառություններ: Միանգամայն որոշակի է հայկական հեքիաթների հետ դրանց պահպանած բնահարստությունը: Օրինակ. «Մուսա-քոսա պապիկի վերջը» և Հ. Թումանյանի մշակած «Ջարի վերջը» հիմքում նման են (էջ 89—90) կամ «Բու աղչիկը» «Գառնիկ աղպոր» մի յուրովի տարբերակն է:

Ավանդությունների, հատկապես անեկղոտների ու առակների մեջ սեղծ խոսքի միջոցով ավելի սուր միտք ու ելույթացություն է դրված և գերակշռում է հումորի զգացումը: Այդպիսին են հատկապես «Քրիստոսն ու իր տղան», «Պառավի սյուն ու երեցի մորուքը», «Մուլան ու տերտերը», «Հլուր չի պահի», «Օձն ու ջրի կրիան» (էջ 116, 106—108):

Քննարկման բանահյուսության բաժնում զետեղված են՝ խաղիկներ, ծիսակենցաղային, հայրենասիրական, զինվորի ու տարագրության երգեր և մի քանի երգերի նոտագրված նմուշներ: Ամեն ոք, ով որևէ կերպ առնչվել է մուսալեռոցուն, նրա պատմությանը, նրա մասին պատմվող հուշերին, անպայման լսած կլինի «Հալա, հալա, հալա նինա է» շանրահայտ երգը կամ նրա հետ կապված որևէ իրապատում: Այս սքանչելի երգը մուսալեռոցու (նաև հարևան՝ Քենասայի հայության) յուրօրինակ անձնագիրն է, նրա կենսաբանություն, առնական ու թնդույն բնավորության արտացոլը և ավանդական շուրջպարի սիրված միղձնիքն:

Զիթրի ի լուսն-լայսը,
Միրիմ գիշուցիտ լայսը,
Անկէ՛ն, տօղը մանդալէ,
ՏՃն գէմ սիրդը մը՛ վառէ,
Քիլիթէյն պէյը կ՛ացունծ ի,
Պրը նիշանվէյմ փստոճ ի,
Թինտրէն պճյը նրպճ է,
Էմ ուզուճը վրաճ է...

Մաթն է լուսնի լույսը,
Սիրեմ աչքերիդ լույսը,
Աղջի, դռնակը փակիր,
Դու իմ սիրտը մի վառիր,
Ժամի բակը գնացել է,
Պիտ նշանվեմ ասել է,
Թոնրի բակը նեղլիկ է,
Իմ ուզածը որբիկ է...

(էջ 118, 119, 122)

Ժողովածուի մեջ տեղ գտած մյուս երգերում աչքի են զարնում մուսալեռոցու բնավորության ու նկարագրին հատուկ պատկերները, խոհերն ու հուզական ցայտուն շնչտերը (էջ 123, 124): Տնից-տեղից հեռու պանդուխտ մուսալեռոցին երգել է, երազելով հայրենի օջախը, թզենին, ընկույններն...

Շատ քնորոշ ու իմաստալից են հատկապես ասացվածքներն ու առածները, որոնց մեջ է մուսալեռոցին խոսքերի իր շարքաշ կյանքի դարավոր փորձն ու իմաստությունը:

Մէյմ էյը վրբը լայս շուղուր:
Գըրըքէն մարը ուլէդ գուլու:
Քուր գդրէ, ըմըր հուց մ'աղէ:
Սէյդ գը՝ բաղաբ իէկ մը գիժը:
Հա դճն փլէյս, հա՛ գիղիցա...

Մոմն իր տակը լույս չի տա:
Կտրիճի մայրը շուտ լաց կլինի:
Քար կոտրիր, բայց հաց մի խնդրիր:
Սուտ կա՛ պատարագ արժի:
Նույնն է՝ տուն են քանդել, թե՛ եկեղեցի...

(էջ 160, 145, 171, 167, 156)

Աշխատությունում կան նաև մասնակի թերություններ՝ տառադարձական, քերականական, թարգմանական ընդթիվ:

Ժողովածուում նյութերը բերված են Մուսալեռան բարբառի գերազանցապես Քարուսին և Հաջի-Հարիրի գյուղերի խոսակցականով, իսկ Ցողուն-Օլուկ գյուղի (նաև Խըդըր-Բեկ և Վազըճ

գյուղերի) խոսակցականով նյութերի պակասը զգալի է: Տվյալ ենթաճյուղը, որն արանցքային տեղ է բռնում, ըստ էության դուրս է մնացել իր շեշտված առանձնահատկություններով ու կոլորիտով: Դա բավականաչափ նվազեցնում է այս նյութերի հիման վրա Մուսալեոան բարբառի ուսումնասիրության (թեկուզև մասնակիորեն) հնարավորությունը:

Ժողովածուն գիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հայ ժողովրդի այլ հատվածների, մասնավորապես Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի պատմական միջավայրերի բանահյուսական ժառանգությունների հետ համեմատական քննական աշխատանքներ կատարելու համար:

Կարելի է վստահ ասել, որ կորստից փրկված և ուսումնասիրված է բանահյուսական խրոք շատ ինքնատիպ ու հարուստ նյութ: Այն, անտարակույս, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՓԱՅԼԱԿ ԱՆՓԱՊՅԱՆ

Բաճախիական գիտությունների թեկնածու